Հաստատում եմ տնօրեն՝ Մ. Դավթյան

31.08.2023թ.

ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

4-ՐԴ Բ ԴԱՍԱՐԱՆԻ

2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

ԴԱՍՂԵԿ՝ ՀԵՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դասղեկի ժամերի թեմատիկա

N	Դասի թեմա	Դասի նպատակը
1.	Հաջողության գրավականը	Դասարանում ստեղծել բարյացակամ մթնոլորտ։Ներկայացնել բնավորության այն գծերը,որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել հաջողության հասնելուն։
2.	Հաջողության ուղիները	Վերհանել հատկանիշներ և որակներ,որոնք կարող են օգնել նպատակին հասնելուն։

3.	Բարեկիրթ հաղորդակցում,հնարամտություն	Կարևորել բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում։Խթանել հնարամտությունը,կարևորել հնարամտության դերը նպատակն իրագործելու համար։
4.	Մնաս բարով, անհաջողությու՛ն	Օգնել գիտակցել,որ ծուլությունը խոչընդոտ է հաջողության ճանապարհին,որ հաջողությունը մեծ մասամբ ջանասիրության արդյունք է։
5.	Աշխատանք և խաղ	Օգնել գիտակցել,որ մեր վերաբերմունքից կախված՝միևնույն աշխատանքը կարող է հաճելի գործ կամ ծանր պարտականություն դառնալ։
6.	Նպատակների իրականացում	Օգնել գիտակցել,որ համառությամբ և աշխատասիրությամբ կարելի է իրականանալի դարձնել հաճախ անհասանելի թվացող նպատակները։Ամփոփել թեմայի ընթացքում սովորածը։
7.	Սեռային ստերեոտիպեր	Վերհանել հասարակական կյանքում արմատացած սեռային ստերեոտիպերը,մտորել կանխակալ կարծիքների և դրանց պատճառների շուրջ։
8.	Տարածված կարծիքներ	Վերհանել սեռային տարբերությունների վերաբերյալ որոշ արմատացած կանխակալ պատկերացումները։
9.	Աշխատանքի բաժանում	Վերլուծել <<տղամարդու գործ>> և <<կնոջ գործ>> հասկացությունների առաջացման պատճառները և աշխատանքի նման տարբերակման պայմանական լինելը։
10.	Ընկե՞ր,թե՞ ընկերուհի։Հավասար իրավունքներ	Օգնել գիտակցել,որ մարդկային որակները կախված չեն մարդու սեռից։Ներմուծել սեռերի իրավահավասարության գաղափարը։
11.	Բազմազանություն	Օգնել գիտակցել,որ աշխարհը հարուստ է իր բազմազանությամբ,որ տարբեր լինելը չպետք է խտրականության պատճառ

		դառնա։
12.	Մեր դպրոցի ճանապարհը և նոր երթուղիները	Աշակերտները կծանոթանան նոր երթուղիներին և դեպի դպրոց տանող ճանապարհին։
13.	Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգումը։	Նախորդ դասարաններում անցած գիտելիքների ստուգում։
14.	Սովորողների տեղաշարժը խմբերով և շարասյուներով	Կիմանան խմբերով և շարասյունով տեղաշարժվելու կանոնները։
15.	Վարորդի աշխատանքը	Գաղափար կկազմեն վարորդի աշխատանքի մասին։
16.	Աշակերտների տեղափոխումը բեռնատար ավտոմեքենաներով։	Աշակերտները կծանոթանան բեռնատար ավտոմեքենայի գործառույթներին։
17.	Վարորդներին նախազգուշացնող ազդանշանները	Կծանոթանան վարորդների կողմից կիրառվող նախազգուշացնող ազդանշաններին։
18.	Ավտոմեքենաները և մոտոցիկլները հատուկ ազդանշաններով սարքավորելը։	Կծանոթանան ավտոմեքենաները և մոտոցիկլները հատուկ ազդանշաններով սարքավորելուն։
19.	Գործնական պարապմունքներ հատուկ գծանշված հրապարակներում։	Գործնական պարապմունքի միջոցով կստուգվեն աշակերտների տեսական գիտելիքները։
20.	Էքսկուրսիա քաղաքում/ավանում/	Էքսկուրսիա
21.	Հանրագումարային պարապմունք	Տարվա ընթացքում անցածի կրկնություն։
22.	Անարդարություն,խտրականություն, կանխակալություն	Օգնել հասկանալ,թե ինչ է կողմնակալությունը և գիտակցել դրա հետևանքները,գիտակցել խտրականության ենթարկված մարդու հոգեվիճակը,ընդգծել ոչ բավարար տեղեկությունների հիման վրա եզրահանգումներ անելու և վերաբերմունք ձևավորելու վտանգը։
23.	Թույլ չտանք	Օգնել գիտակցել,որ խտրականությունն ու անարդարությունը կասեցնելու լավագույն միջոցն այն չհանդուրժելն է։
24.	Սիրում եմ իմ երկիրը	Մարդկանց վարքագծի տարբեր դրսևորումների օրինակով օգնել տարբերակել այն վերաբերմունքը,որը կարելի է գնահատել որպես սեր հայրենի

		երկրի հանդեպ։
25	Կանանց միջազգային տոն	
26.	Հայաստանի տեղն աշխարհում	Ճանաչել Հայաստանը,այլ երկրների հետ համեմատության մեջ ծանոթանալ նրա առանձնահատկություններին։
27.	Մեր անցած ճանապարհը	Հստակեցնել Հայաստանի պատմության մասին ունեցած տեղեկություններն ու պատկերացումները։
28.	Հայաստանի մարզերը	Ընդլայնել Հայաստանի մասին գիտելիքները։Պատկերացում տալ Հայաստանի աշխարհագրության,նրա վարչական բաժանումների մասին։
29.	Հայերը ներկայանում են աշխարհին	Նպաստել ազգային արժեքների բացահայտմանը և գնահատմանը։Արժևորել ազգային նվաճումները։
30.	Երկիր մոլորակի միջազգային օր	
31.	Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր	
32.	Մեր՝հայերիս առանձնահատկությունները	Ի մի բերել հայրենի երկրի մասին ունեցած գիտելիքները,վերհանել և արժևորել ազգային առանձնահատկությունները։
33.	Ընտանիքի միջազգային տոն	
34.	Ամփոփում	Ամփոփել թեմայի ընթացքում հայրենիքի մասին ձեռք բերված գիտելիքները։